



Հայաստան. Բանկային հատվածի հզորացում՝ ֆինանսական ներառվածության նպատակով

Ծրագրի անվանումը	Բանկային հատվածի հզորացում՝ ֆինանսական ներառվածության նպատակով		
Ծրագրի համարը	51184-001		
Երկիրը	Հայաստան		
Աշխարհագրական տեղակայումը	Համազգային		
Վարկառու/ընկերություն	Ամերիաբանկ ՓԲԸ		
ԱԶԲ-ի կողմից աջակցության տեսակը/ գումարը	Սովորական կապիտալ ռեսուրսներ	30.00մլն ԱՄՆ դոլար	Հաստատված է
	Սովորական կապիտալ ռեսուրսներ	30.00մլն ԱՄՆ դոլար	Հաստատված է
Հաստատման համարը	7521/3575, 7521		
Ռազմավարական նպատակները	Ներառական տնտեսական աճ		
Փոփոխության շարժիչ ուժերը	Գենդերային հավասարության և ինտեգրման խթանում		
	Մասնավոր հատվածի զարգացում		
Ոլորտ / Ենթաոլորտ	<b>Ֆինանսներ</b> - Ֆինանսների ոլորտի զարգացում - Փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորում և լիզինգ		
Գենդերային հավասարության խթանում	Գենդերային որոշակի տարրեր		
Պատասխանատու վարչություն ԱԶԲ-ում	Մասնավոր հատվածի գործառնությունների վարչություն		
Պատասխանատու բաժին ԱԶԲ-ում	Մասնավոր հատվածի և Ֆինանսական հաստատությունների բաժին		
Պատասխանատու անձ ԱԶԲ-ում	Չինա, Ասիֆ		
Ծրագրի հովանավորները			
Նկարագրություն	ԱԶԲ-ի՝ առաջարկվող աջակցությունը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից (i) առաջարկվող վարկ մինչև 30,000,000 ԱՄՆ դոլար կամ դրա համարժեքը՝ ՀՀ դրամով Ամերիաբանկ ՓԲԸ-ին և		

(ii) առաջարկվող մասնակցություն Ամերիաբանկի սեփական կապիտալում՝ մինչև 30,000,000 ԱՄՆ դոլարի համարժեքը ՀՀ դրամով՝ Հայաստանում բանկային հատվածի հզորացման և ֆինանսական ներառվածության նպատակով:

**Նպատակները և ծավալը**

ԱԶԲ-ն կաջակցի Ամերիաբանկին՝ հաճախորդների այս կարևոր հատվածին ֆինանսավորում տրամադրելու և նոր պրոդուկտների ցանկը ընդլայնելու գործընթացում՝ սատարելով ընդհանուր տնտեսական աճը, աշխատատեղերի ստեղծումը և դիվերսիֆիկացումը:

**Ծրագրի հիմնավորումը և կապը երկրի/տարածաշրջանի ռազմավարության հետ**

Կապը երկրի ռազմավարության հետ. ԱԶԲ-ի՝ 2020թ ռազմավարության միջնաժամկետ վերանայման շրջանակներում ԱԶԲ-ն նպատակ ունի հզորացնել իր աջակցությունը ֆինանսական հատվածին՝ օժանդակելով ֆինանսական ենթակառուցվածքների, հաստատությունների, պրոդուկտների և ծառայությունների զարգացմանը և նպաստելով ներառական աճին: Ամերիաբանկը շեշտը դնում է աշխատատեղեր և եկամուտներ ստեղծելու բարձր ներուժ ունեցող հատվածների վարկավորման վրա, ինչը կնպաստի ներառական աճին: ԱԶԲ-ի միջոցները կօգնեն Ամերիաբանկին վարկեր տրամադրել ՓՄՁ-ներին՝ իրենց ներդրումային կարիքները բավարարելու և ընդհանուր աճին նպաստելու նպատակով: Սա համահունչ է կառավարության՝ աճին և տնտեսական դիվերսիֆիկացմանը նպաստելու ջանքերին, ինչպես նաև ԱԶԲ-Հայաստան գործընկերության 2014-2018թթ ռազմավարությանը:

Կապը ոլորտի ռազմավարության հետ. Ամերիաբանկին տրամադրվող վարկը և սեփական կապիտալում ներդրումը ի ցույց են դնում, որ ԱԶԲ-ն կշարունակի մասնակցել Հայաստանի ֆինանսական շուկայի զարգացմանը և աջակցել ՓՄՁ-ներին: Այս ծրագրերը նաև համալրում են ֆինանսական ոլորտում պետական ծրագրերը, օրինակ՝ Կանանց ձեռներեցության աջակցության և ոլորտի զարգացման ծրագիրը (2012թ.):

**Բնապահպանական և սոցիալական գործոնների ամփոփագիր**

Բնապահպանական ասպեկտներ FI

Հարկադիր տարաբնակեցում FI

Տեղաբնիկներ FI-C

**Բնապահպանական և սոցիալական ասպեկտների ամփոփագիր**

**Բնապահպանական ասպեկտները**

Ամերիաբանկի կողմից մշակված՝ առաջարկվող վարկի և սեփական կապիտալում մասնակցության համար Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի ուսումնասիրությունը հաստատում է, որ առկա ԲՄԿՀ-ն ներառում է այնպիսի դրույթներ, որոնք բավարար են՝ հայտնաբերելու, ստուգելու, գնահատելու և անդրադառնալու բնապահպանական և սոցիալական ազդեցություններին, որոնք առաջանում են ներկայիս և հետագա ծրագրերի արդյունքում: Թեև բանկի քաղաքականությունը, ռեսուրսները և կարողությունները համապատասխանում են

պահանջներին, սակայն ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ամերիաբանկը չի բավարարում ԱԶԲ-ի Ա կատեգորիայի ենթաձրագրերի բացահայտման պահանջը: Հետևաբար, Ա կատեգորիայի ենթաձրագրերը չեն ֆինանսավորվելու ԱԶԲ-ի վարկային միջոցներից և սեփական կապիտալում մասնկցության միջոցներից:

#### Հարկադիր տարաբնակեցում

Ամերիաբանկի ԲՄԿՀ-ի՝ հարկադիր տարաբնակեցման տարրերը գնահատվել են 2011թ. ԱԶԲ-ի՝ Երաշխիքների քաղաքականության հայտարարագրի /ԵՔՀ/ համաձայն: Ամերիաբանկի ԲՄԿՀ-ի սքրինինգի և դասակարգման ձևաթուղթը մասնավորապես ստուգում է հարկադիր տարաբնակեցման ազդեցությունը ենթաձրագրերի վրա: ԲՄԿՀ-ն ներառում է ընթացակարգեր, որոնց նպատակն է՝ մեղմացնել հարկադիր տարաբնակեցման ազդեցությունները և ապահովել, որպեսզի դրանք կառավարվեն ենթավարկառուների կողմից ԱԶԲ-ի ԵՔՀ-ի համաձայն, ինչպես նաև այլ վարկատուների պահանջների համաձայն, ինչպիսիք են ՎԶԵԲ-ը և Միջազգային ֆինանսական կորպորացիան: Ամերիաբանկը ԱԶԲ-ի ներկայիս հաճախորդն է, որը նախկինում համապատասխանել է հաշվետվության նկատմամբ ներկայացվող պահանջներին, և կշարունակի տարեկան հաշվետվություններ ներկայացնել ԲՄԿՀ-ի և ԵՔՀ-ի պահանջներին իր համապատասխանության վերաբերյալ: Ա կատեգորիայի ոչ մի ենթաձրագիր չի ֆինանսավորվի ԱԶԲ-ի միջոցներով:

#### Տեղաբնիկներ

Չի ակնկալվում, որ այս ծրագիրը որևէ ազդեցություն կունենա տեղաբնիկների վրա:

#### Հաղորդակցություն շահակիցների հետ, նրանց մասնակցությունն ու խորհրդատվությունը

Ամերիաբանկի շուկայի վերլուծությունը ներառում է ներկայիս և հետանկարային հաճախորդների հետ փոխհարաբերություններ՝ հասկանալու նրանց կարիքները և մշակելու պրոդուկտներ և տեղեկատվական միջոցառումներ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի բավարարել այդ կարիքները: Տեխնիկական օժանդակությունը, որը կտրամադրվի առանձին, նպատակ ունի զարգացնել այդ կարողությունները՝ շահագրգիռ կողմերի կարիքները ավելի արդյունավետ կերպով հոգալու համար: Ինչ վերաբերում է վարկառուի ենթաձրագրերին, որտեղ կան բնապահպանական և սոցիալական ռիսկեր և ազդեցություններ, ապա Ամերիաբանկը իր՝ ԲՄԿՀ-ի միջոցով պարտադրում է, որպեսզի նրա ենթավարկառուները իրականացնեն մեղմացնող և կառավարման միջոցառումներ, որոնք մշակվել են շահագրգիռ կողմերի հետ լուրջ խորհրդակցության արդյունքում:

#### Նախագծման, մշակման և իրականացման ժամանակացույցը

Հայեցակարգի ընդունում	20-ը հունիսի 2017թ.
Տնտեսատեխնիկական ստուգում	
Վարկային կոմիտեի ժողով	17- օգ 2017թ մինչև 17 օգ., 2017թ.
Հաստատում	27-ը սեպտեմբերի, 2017թ.
Ծրագրի տեղեկատվական թերթիկի վերջին թարմացումը	25-ը հունվարի 2018թ.
Ծրագրի մասին էջը համացանցում	<a href="https://www.adb.org/projects/51184-001/main">https://www.adb.org/projects/51184-001/main</a>
Տեղեկատվություն ստանալու համար	<a href="http://www.adb.org/forms/request-information-form?subject=51184-001">http://www.adb.org/forms/request-information-form?subject=51184-001</a>
Ստեղծման/գեներացման/ ամսաթիվը	2018թ. մայիսի 8-ը

Ծրագրի տեղեկատվական թերթիկը (ՄՏԹ) ամփոփ տեղեկատվություն է պարունակում նախագծի կամ ծրագրի վերաբերյալ: Քանի որ ՄՏԹ-ն աշխատանքային փաստաթուղթ է, դրա սկզբնական տարբերակում գուցե ներառված չլինեն որոշ տեղեկություններ, սակայն նոր տեղեկությունների ի հայտ գալուն զուգահեռ դրանք նույնպես կներառվեն փաստաթղթում: Առաջարկվող ծրագրի մասին տեղեկությունները նախնական և ուղղորդող բնույթ ունեն:

ԱԶԲ-ն ծրագրի տեղեկատվական թերթիկում (ՄՏԹ) պարունակվող տեղեկատվությունը տրամադրում է բացառապես որպես դրանից օգտվողների համար ռեսուրս, առանց որևէ երաշխավորության: Թեև ԱԶԲ-ն փորձում է ապահովել բովանդակության բարձր որակը, այդ տեղեկատվությունը տրամադրվում է «ինչպես կա», առանց որևէ բացահայտ կամ ենթադրվող երաշխավորությունների, ներառյալ՝ առանց սահմանափակումների երաշխավորությունները առևտրային օգուտների, կոնկրետ նպատակի համար պիտանիության և խախտման բացառման վերաբերյալ: ԱԶԲ-ն, մասնավորապես, չի երաշխավորում այդպիսի տեղեկատվության ճշգրտությունը կամ ամբողջականությունը: